

## Բալագույն կրծկալով կինը

հատված

Բալագույն կրծկալով կինն իր բովանդակությամբ ազդեց տեքստի վրա ու արմատապես փոխեց հորինվածքիս առանցքային ուղղությունը: Նա հասկացել էր, որ ամեն ինչի մեջ արատ են փնտրում, քանզի ողջ կյանքում հայացքս ուղղված է եղել կատարյալի փնտրտուքների կողմը: Ֆիզիկան որևէ խնդիր առայսօր չի լուծել ճշգրտորեն ու դրանք լուծելու համար որպես գործիք հնարել է հավանականությունների տեսությունը: Լապլասի թեորեմից ու Պուասոնի բաշխումից ոչինչ չեն հիշում, թեպետ ազնվորեն սովորել ու հանձնել են ստուգարքը: Այո՛, այո՛, ինձ այս պահին հետաքրքրեց, թե ինչ են ստացել հավանականությունների տեսությունից ու շտապեցի նայել ստուգարքիս գրքույկը, որը չէի հանձնել ժամանակին՝ անամոթաբար ստելով, որ կորցրել են: Պարզվեց՝ սիրածս առարկան քննություն չի եղել:

Ուրեմն, բալագույն կրծկալով կինը չափազանց հստակ հասկացել էր, որ յուրաքանչյուր պատկերի, երևույթի, մարդու կամ ԲԱՆԻ մեջ փնտրում են բացասական կողմն ու չեն հավատում իդեալական գերազանցության վիճակին: Մարդն իր բնույթով անկատար էակ է. երկար տարիների փնտրտուքներից հետո հանգել էի ով գիտի՝ դարեր առաջ ցիտված սույն փիլիսոփայական մտքին ու մարդամեկի ինադու տեքստիս մեջ օգտագործել «սույն» բառը: Մարդամեկն ասում է, որ սույնը հնացած բառ է ու ճիշտ կանեն, որ խուսափեն դրա օգտագործումից: Բառերի նկատմամբ հատուկ վերաբերմունք ունեի, որը ոչ մի ձևով չէր վերահսկվում. դրանք հոսում էին ինքնաբերաբար ու նույն սկզբունքով թռած սույն բառն ինձ դուր էր գալիս, թեպետ այն, իհարկե, այլ ոճի տեքստին հարիր բառ էր, որի օգտագործումն այս տեքստում նման էր թռված կարճիկ ու խառնոտ ոճով հագնված աղջկա արտաքին ատրիբուտների մեջ հայտնված մի դասական էլեմենտի՝ ասենք գալստուկի:

Ջվարճալի կլինի, ինձ թվում է, դիտել թեթև սպորտային կոշիկներով ու դրան համապատասխան շորեր հագած աղջկա քայլքը փողոցի մայթով, որի օձիքին մեղմ պարուրված կլինի սև դասական գալստուկը: Սույնը սույն էր, ու որոշեցի նրան պահի տակ օգտագործել՝ հետագայում վերանայելու կամ տեղը թողելու որևէ մտադրություն չունենալու անտարբերությամբ:

Փաստորեն, բալագույն կրծկալով կինը, որը տեքստս սկսելու պահին՝ բանից անտեղյակ, ով գիտի, ապրում էր իր համար աշխարհի ինչ-որ մի անկյունում՝ Լապլասի թեորեմի համաձայն, որը պատահարի կայացման հավանականությունը հաշվում էր դրան նախորդած պատահարների գումարի թե բազմապատիկի հանրությով, որոնցից էին, օրինակ, ինֆինիտի վարորդին, ընկերներիս, գրախանութի տնօրենին, ինչպես նաև փողոցի վրայով անցնելու սովորույթս արհամարհելը, բավական չէր որ հայտնվել էր Նժդեհի թույլ միզահոտով գետնացման տակ ու ծառայել տեքստիս համար որպես առանցք, հետո էլ ընթացքում ծավալված մեր զրույցների ազդեցության ու դրանից դուրս զարգացող իրադարձությունների

հետնապատկերին տրամագծորեն փոխել տեքստի տրամաբանորեն շարունակական բովանդակությունը, աստիճանաբար սկսել էր դառնալ պարտադրող էլեմենտ, ու ինքն էր թելադրում շարունակությունը:

Բալագույն կրծկալով կինն ինձ ստիպեց, որ գրեմ հետևյալ տողերը. «Նա տրամագծորեն փոխել էր մտահղացված տեքստի շարադրման ուղղությունն ու թելադրում էր նոր բովանդակություն՝ տրամագծորեն նոր ուղղությամբ»:

Իհարկե, դա չէր հակասում տեքստ գրելու նախնական կոնցեպտիս, քանի որ այն թույլ էր տալիս ցանկացած ուղղության կամ միջամտության գոյությունը. այսպես թե այնպես՝ տեքստ կապվում էր բալագույն կրծկալի կամ կրծալը կրող կնոջ հետ, որը Պուլասոնի բաշխման համաձայն՝ կոնկրետ ժամանակի ընթացքում տեղի ունեցած պատահարների թիվը ներկայացնող պատահական մեծություն էր և բավարարում էր մաթեմատիկոսի պնդմանը, որ նրա հետ իմ հանդիպումը տեղի էր ունեցել ինֆինիտիկ վարորդի, գրախանութի տնօրենի ու ընկերներիս հետ հանդիպման՝ կոնկրետ, միջին ինտենսիվության ու միմյանցից անկախ գոյություն ունեցող պատահարներին զուգահեռ:

Բալագույն կրծկալով կինը անհատականություն էր, որի նուրբ միջամտությամբ տեքստի ընթացքը լրիվ փոխվեց, ու, ի սկզբանե նրան վերագրված էլիտար պոռնիկի մտահղացված կերպարը մնաց միայն տեսականորեն գոյություն ունենալու իրավունքի դիրքում, որի գործնական կիրառման հավանականությունը զրոյին անվերջ մոտիկ թիվ էր:

Օրեր շարունակ խուսանավում էի այդ մասին գրելուց՝ դրան վերագրելով ժամանակի բացակայություն ու ընկերոջս տեքստերի վրա ծախսած էներգիայի կորուստ: Իրականում, սակայն, դրանք լկտի պատճառաբանություններ էին, որոնք հորինել էի միտքս բալագույն կրծկալով կնոջ պարտադրանքից թեթևակիորեն ազատելու ու այդ մասին տեքստից դուրս խորհելու համար: Տեքստում նա դառնում էր գերակշռող, ու մտածված գաղափարը մտածողությունից ազատ շարադրելու և այդ ընթացքում ծնված մտքերի ընթացքում հարմարեցնելու կամ նոր հունով առաջնորդելու համար պահանջվող կուռ կոնցեպտ գտնելու համար մի քանի օրով մտքերս անջատել էի տեքստից և ուղղել ուրիշ ուղղությամբ: Իսկ այդ ուղղության հորիզոնում իսկական կատաստրոֆա էր:

Երեք օր ջուր չունենալուց հետո վերջապես ծեծեցի հարևանիս դուռն ու պարզվեց, որ շենքի մատոռը գողացել են: Ա՛յ, քեզ արմագեղոն: Ջրի բացակայությունն իմ համար արմագեղոնից արմագեղոն էր, ու ես թունդ կատաղել էի: Այդ մատոռը գողացել էին նաև մի կես տարի առաջ գարնանը, որի ժամանակ, բարեբախտաբար, ես Ամերիկայում էի, ու մինչև էլեկ էի՝ նորն էին գնել ու մենակ փողը տվեցի: Թագա մատոռ կոչվածը նոր տարուց մի ամիս առաջ էլ եսիմ ինչ էր եղել ու ու էլի բախտս բերեց. 4 օրով գնացի Ծաղկածոր ու մինչև էկա՝ մատոռը սարքել էին: Է՛, հիմի եթալու տեղ չունեն, ՄԱՏՈՒՆ ԷԼ ՄԻ ՇԱԲԱԹ Ա ՉԿԱ:

Ոչ վաղ անցյալս հիշելու ցանկություն, մեղմ ասած, չունեն, բայց փաստը մնում էր փաստ, որ մեր շենքի երեք մուտքի բարձր հարկերի բնակիչներից մեծ մասը

նկուղներում սեփական մատոռներ ունեի, առաջին երեք հարկում էլ ինքնահոսով ջուրը բարձր ճնշման տակ գալիս էր, ու քանի որ ձմեռ էր ու դեռ ոռոգման հարց չկար՝ նույնիսկ մինչև հինգերորդ հարկ էդ ջուրը մի կես ժամով հասնում էր: Բայց էդ կես ժամում բաքս ասենք թե լցնեն ու, ենթադրենք, զուգարանը ջուր լցնելու համար ջուր չկրեն, բայց կալոնկես ոնց վառե՞մ, հը՞, էդ թույլ ճշման տակ:

Իմ ինադու բռնեցի ու մի շաբաթ չլողացա:

-Դե մինչև գարուն մի բան կըլնի, մի մտածի,- քյալ-քյալ ասեց կողքի հարևանս ու ստե ֆազերս խփեցին:

-Գի՞ժ ես, ա՛յ կնիկ,- գոռում եմ,- ի՞նչ մինչև գարուն: Ես հենց հիմի ջուր եմ ուզում:

-Դե՛, ուզի,- սայլուզի պես վրա ա տալիս բարեհոգի պառավ հարևանս ու ֆիքսվում եմ սրա պառավ դեմքին: Նա առավոտից իրիկուն իրա խոհանոցում աման -չաման ա լվում, որի չխկոցն արդեն մտնում է տեքստիս մեջ ու էս կտորից արդեն աչքով ա տալիս: Էդ չխկոցը վրես ահավոր ազդում ա, որտև ենքան լոթի-փոթի պառավ ա, որ ամանները ումիվալնիզի մեջ ակուռատնի դնելու տեղը շրխկոցով շարտում ա: Ու նույն ձևի էլ շարժվում ա: Մի անգամ Նոր տարվա սեղանի վրա նենց էր խառնվել, որ մտել էի իրանց տուն, ինձ սոկ լցնելուց ձախ ձեռի նույնպիսի մի լոթի շարժմամբ գետին գլորեց կողքի սպասքի երկու բաժակներն ու հաջողեցրեց վրաս լցնել մոտակա կիսադատարկ բաժակի պարունակությունը:

Քյասար մի շաբաթ չլողացա: Էդ իմ համար ամենախիսկական կատաստրոֆա էր: Կարայի պիժի-պիժի ջուր տաքացնեի, բայց չուզեցի: Ստածեցի մի հատ հիշեմ ոնց եմ դիմացել 90-ականներին: Ահավոր էր: Ո՛չ: Ահավոր ա, ոչ թե էր: Մազերս կպել են գլխիս, իսկ ոտներս մասկիների մեջ զզվելի զգացողություն են փոխանցում դեպի վերև: Մի շաբաթ ա չեմ լողացել, իսկ իմ մաշկը ահավոր յուղոտ ա: Ես սիրում եմ երկար ու մանրամասն լողանալ տաք ջրով լցված վաննայի մեջ ու դա կանեմ ամեն օր, եթե հնարավորություն ունենամ:

Հիշեցի 90-ականները: Ու լրիվ հիշելու ա, որտև բաղնիքիս լամփուշկեն մի քանի ամիս ա, որ վառված ա տո լի լռվել ա պատրոնի մեջ ու չգիտեմ ոնց հարցերը լուծեմ: Քյասար, բաղնիք-զուգարանումս, որ ռեմոնտի ժամանակ միացրել եմ իրար՝ լրիվ 90-ականներ ա, պյուս դրան՝ էսօր թույլ միզահոտ առա: Դրանցի ֆազերս ահավոր խփում ա: ՍԱՆՅԱՆԳՈՒՅՑԻՑ ՄԻԱՅՆ ԱՆՈՒՇ ՀՈՏԵՐ ՊԻՏԻ ԳԱ: Ես բաղնիքս հատուկ դուխի եմ դնում ու ցանում, որտև էդ զզվելի հոտով փչովի դեզադորներից զզվում եմ, որ տուալետի մեջ եմ փչում: Դրանց դիշովի հոտը քաքի հոտից վատն ա: Ավելի լավ ա քաքի հոտ գա, քան թե դա: Բայց էսօր ջոկեցի, որ շատ թույլ միզահոտ ա գալիս: Դե, ինձնից հոտ չի գալիս, բնականաբար: Ու էդ նրա համար չեմ ասում, որ ես եմ: Ես հոտերի գծով մասնագետ եմ ու հոտերի նկատմամբ ահավոր զգայուն: Փոքր վախտ մի ընկերուհի ունեի, որը հիմի Լենինգրադում ա ու հասցրել ա իրեք ռես պասկվի: Նրա բերանից հոտ էր գալիս ու հաստատ համոզված եմ, որ մինչև հիմա էլ էդ հոտը գալիս ա: Հըլ եմ վախտվանից սարսափած, թե կարո՞ղ ա իմ բերանից էլ ա հոտ գալիս, սաղ ընկերուհիներիս զաստավիտ էի անում, որ բերանիցս հոտ քաշեմ ու ազնվորեն ասեն, թե հո հոտ չի՞ գալիս:

Հետո անցա քրտնքիս հոտի ուսումնասիրությանն ու մանրամասն հոտ էի քաշում շորերի թևերի տակից, մանավանդ նրանցից, որոնք ասենք մի քիչ երկար էի հագել ու քրտնելուց հետո թևատակերում քրտնքի հետք էր մնացել: Դրա հոտը դուրս գալիս էր: Ոչ մի վանող բան չկար: Հանգիստ էի եղ առումով: Իհարկե, ես հոտերի մասին առանձին հետո կգրեմ, ուղղակի էս պահին, քանի որ մի շաբաթ ա, որ չեմ լողացել, ուզում եմ հավաստիացնել, որ վրիցս ոչ մի գեշ հոտ չի գալիս: Ու դա ասում եմ, որտև այդ նույն մի շաբաթը առանց լողանալու ու մազերս լվալու հերիք չի գնացել եմ գործի, մի հատ էլ օրվա վերջում մտել եմ իմ ձյունաճերմակ անկողինը: Մի խոսքով լրիվ ընկճված էի: Թքեցի լոգարանիս թույլ միզահոտի վրա: Չնայած վերջում փոշմանեցի ու թույլ կապտավուն հեղուկը լցրի կոնքի մեջ, որ մի տաս րոպեից լվամ: Ես կեղտոտ, զուգարանս կեղտոտ, էդ ո՞ւր կհասնի:

Սաղ մուտքը խառնեցի իրար: Տրեվոզը դրել եմ: Ոչ մեկի տանձին էլ չի: Մարդիկ իրանց բները մտած ապրում եմ. դե մի բան կըլնի էլի: Մարդկանց միտքը «մի բան կըլնի էլի»-ից էն կողմ չի անցնում, ու հետո, երբ իրանց հետ վատ բաներ ա կատարվում, կամ իրանց կյանքից բողոքում եմ՝ ոչ մեկի մտքով չի անցնում սեփական անհաջողությունների պատճառը իրանց ներսում փնտրել: Էդ բոլոր պատճառները նրանք փնտրում եմ իրանցից դուրս, մոռանալով, որ երբ շենքի մատոռը գողացել էին, ինչ-որ քայլեր ձեռնարկելու համար, որոնք հետագայում կբերեին բալագույն կրծկալով կնոջ հետ հանդիպմանը, գերադասում եմ կաստուրկով ջուր տաքացնել ու «դե մի բան կըլնի էլի-ով հարցը փակել:

Քյասար լրիվ ընկճված ու լքված եմ: Մարմինս կեղտոտ ա, գլխիս մազերը կպել եմ իրար, մատներս գլուխս տանելուց հետո եղունգներիս տակը լիքը լցված ա դուրս գալիս, ոտիս մատները նասկիներիս մեջ անհանգիստ պտտվում եմ՝ վերև փոխանցելով տհաճ զգացողություններ: Դառել եմ կեղտակորույս Տաիշա: Ներվայնությունից ոչնչացնում եմ չարագի միջի բոլոր հնդկական պոպոքները: Բերել եմ չարագիս պարկն ու լցրել մեծ թասի մեջ, հատ-հատ ջոկում ու նույն ձևի մեջ ոչնչացնում եմ: Հետո անցա նուշին: Վերջ: Հավես չունեի ուտելու բան սարքելու ու սովածությունից մի յոթ հատ մանդարին կերա: Կլեպներն էլ լցրի գետնին: Հետո նորից անցա մրգին: Տեսա խնձորը կեղտոտ ա: Տանձիս: Ո՞վ հավես ունի էս ցրտին տաք սենյակից դուրս գա ու էթա կուխնի: Գետնին ընկած մանդարինի կլեպի ներսի խավոտ մասով սրբեցի խնձորի վրայի փոշին ու տեղում ոչնչացրեցի: Բայց դրանից մաշկս չէր մաքրվում:

Լրիվ կեղտակորույս եմ: Լքված: Ու ընկճված: Ուզում եմ սենց կեղտակորույս տնից դուրս գամ, ճամփին միամիտ մեկը ինձ գտնի ու տանի իրանց տուն լողացնելու: Տանի, վաննի մեջ տաք ջուր լցնի ու չզգվի վրիս կեղտերը հանելուց: Ուզում եմ, որ կողքս նստած ինձ լողացնի, թասով գլխիս ջուր լցնի լիքը-լիքը կամ թողա մի 10 րոպե պառկեմ մինչև կեղտերս փափկեն. տենց հեշտ ա դուրս գալիս, մարմինս ու ոտերիս տակը քիսայով պոտի. կեղտերս շերտ-շերտ դուրս գան, տակից երևա թարմ մաշկս, գլուխս լվա՝ եղունգներով լավ մերսելով գլխամաշկս, քիսայով օճառի մարմինս ու թողա տենց մի 8 րոպե կայնեմ դուշի տակ. ոտերս ու թևերիս տակը ես կմաքրեմ. կարող ա ճղի, վերջում էլ խավոտ մեծ սրբիչով փաթաթի ու ցամաքեցնի մարմնիս խոնավությունը: Կդառնամ թարմ ու մաքրեմաքուր Տաիշա: Հետո կնստենք ապակե

տանհիքով ծաղկանոցում դրված փոքրիկ սեղանի շուրջն ու իրար հետ կխմենք իմ սիրած կոֆեն՝ տրյուֆելով կամ գրիլիածով՝ «Ռասիայի» կամ «Բաբալսկի»։ Գրանդ քենդիից զզվում եմ։

Էդ հույսերով հագնվեցի ու տնից դուրս էկա։ Կեղտակորույս քայլում եմ ու ոչ մի բանի մասին էլ չեմ մտածում։ Մարդկանց դեմքին չեմ էլ նայում. ոչ թե նրա համար, որ ամաչում եմ, թե կեղտոտ եմ, այլ ուղղակի չեմ ուզում։ Իրանք ինձնից կեղտոտ են։ Գիտեմ։ Ամեն օր ինչ հոտ ասես, որ չեմ շնչում տրանսպորտի մեջ, ընդ որում, շատ ժամանակ, պրիլիչնի հագնված մարդկանց վրից ու ֆիրմա ավտոների մեջից, որոնք սարքել են տաքսի ու մեջը լցրել զզվելի հոտեր։

Միամիտ հիշեցի գրախանութի տնօրենին։ Ծիծաղս էկավ։ Ասի էթան տենամ խեղճ հարիֆին ինչ էլավ։ Չասա։ Չեռվից տեսա. սեփական օբյեկտի դռանը կանգնած էր՝ աջ ձեռքի մատնեմատը քունքին սեղմած՝ ակնարկելով ուղեղիս շարիկների պակասության մասին կասկածները։ Մոտեցա։ Սառած հայացքով աշարժ կանգնած էր։ Մատով բզեցի, ավելի ճիշտ ուզեցի մատնեմատը քունքից իջեցնել՝ վախենալով, որ մատն այդ դիրքում երկար մնալուց հետո մի օր կարող ա մտքովս անցներ տեքստիս մեջ գրել ատրճանակ ու հետո կրակել։ Իսկ ես դա չէի ուզում, որտև գրողին գրախանութ էր պետք, գրախանութին՝ տնօրեն։ Քյասար, զգուշությամբ ուզում եմ մատնեմատը իջեցնել, մեկ էլ՝ հո՛ւպ, մատը մատիս մեջ ջարդվեց։ Մնացի զարմացած։ Ընկերոջս տեքստերի մեջ ասած՝ քար կտրած։ Կներեք, ինքը կգրեր սենց. «Մատս մեկնեցի դեպ գրախանութի տնօրենի մատն ու զգուշորեն ձգեցի դեպի ներքև։ Չանկարծ՝ մատը կոտրվեց և մեկնված մատս օդում մնաց. ես զարմանքից քար կտրեցի»։

Ստեղ ես ապուշ ժպտացի, որտև ընկերոջս բոլորովին էլ չէի ուզում խառնել ես պատմությանը, բայց ինքը չգիտես ինչի՝ հա խառնվում էր։ Ես մեղավոր չէի, որ գրախանութի տնօրենի մատը կոտրվելու պահին երբ մտածեցի, թե ոնց նկարագրեմ էդ պահը՝ միտքս էկավ նրա նկարագրելու կերպը։

Քյասար, ես մտքերով տարված եմ, երբ գիտակցությունս արձանագրեց, որ մինչև ես տառապում եմ կեղտակորույս մտքերով, ես գրախանութի խեղճ տնօրենը ցրտից սառել ու վայ թե մեռել ա։ Չա էլի։ Աչքիս մեռել ա։

-Այ մարդ մի հատ շարժվի,- բզում եմ տնօրենին ու էդ շարժումից սա՛ հոպ, ընկնում ա գետին։ Թափով առաջ եմ թռնում, որ սրա անկումը կասեցնեն ու առաջ մեկնած ձեռքիս հատու շարժումից տնօրենիս ձեռը պոկվում ու մնում ա ձեռիս մեջ։ Վայ, մամա ջան, ես ինչ անեմ սրա հետ։

-Լսի՛, ընկեր ջան, ես լրիվ կեղտակորույս եմ ու իմ լողանալու դարդն եմ լացում։ Քանի էկել եմ մոտդ, լավ կանես սաղանաս, թե չէ՝ ես որ լողացա, ընկերոջս հետ քեզ կբռնենք ու կարող ա առանց նախօրոք սպանելու սաղ-սաղ մաշկագերծ անենք, հետո էլ մաշկդ թարս յանից կպցնենք ու տենց,- մանրից մոտենում եմ մյուս յանից ու ջոկում, որ չէ՛, ախպեր ջան, ես տնօրենն իսկականից մեռել ա՝ ցրտից թե իմ դարդու, հլը լավ չջոկեցի, բայց ես մասը կարևոր չէր, չնայած կարար և կարևոր լիներ, նայած թե ինչ կոնտեքստով էր գրվում էդ մասը։ Բայց փաստը մնում էր փաստ, որ տնօրենը

մեռել էր, ու տվյալ պահին ես կարևորեցի ոչ թե մահվան պատճառը, այլ մեռնելու փաստը:

Համոզվելու համար, որ գրախանութի տնօրենը հաստատ մեռել ա, ընկած տեղից մի հատ էլ ոտով բզեցի ու սա լրիվ խշուր-խշուր էղավ: Քյասար, էս խեղճ մարդը՝ սպասելով, որ մի օր, վերջապես հետ կգամ ու կանդրադառնամ իրան վերաբերվող հատվածին, որտեղ կորոշեի, թե նրա հետ ոնց վարվեի էն բանից հետո, երբ ինքն իրեն որակեց որպես բեսամթ ինքնաբավ մարդ, որը չափազանց պատասխանատվությամբ ա վերաբերվում էն բոցոտ պահին, երբ ինքը բեղմնավորվել ու աշխարհը երջանկացրել ա իրա ծնունդով, ինչպես նաև չգրած վեպս որակեց որպես զուգարանի թուղթ. ու ստեղ ես մտածեցի, թե ուրեմն, ա՛յ քեզ գրախանութի տնօրեն, ուրեմն, դու ափսոսում ես 200 դրամ փող տաս ու մի ռուլոն չինական, բայց փափուկ զուգարանի թուղթ առնես, ուրեմն գրքի կոշտ թղթով պիտի հետույքդ մաքրես, էն էլ դեպքում, երբ այդ թուղթը մի հատ էլ սևացրած է տպագրական ներկով, ուրեմն էդքան վախտ սպասելուց հետո, որի ընթացքում տարին փոխվեց, ուրեմն խեղճ մարդը ցրտից սառել ու իմ դարդու մեռել էր: Չէ՛, աչքիս, ես սաղ գրախանութների տնօրենների ապագա մեղքն են դառնալու: Է՞դ որ մի տնօրենը կուզենա իմ գիրքը ծախել էն բանից հետո, երբ կարդա, որ տեքստիս մեջ իրան ցրտից սպանել են: Կռացա տնօրենի ջարդոտված մարմնի փշուրների մոտ ու անկապ նստեցի գետին:

Բայց ես սենց չէի ուզում, ախր, վարվեի գրախանութի տնօրենի հետ, ու ոչ թե հետև մտնելու համար, այլ ուղղակի, ես բարի մարդ եմ ու չէի ուզի, որ անկապ տեղը՝ էն էլ իմ պատճառով մարդ մեռներ: Ստածում էի, որ հետ կգամ ու վեպս կվերցնեմ ձեռքից, հետո կմտնեինք ներս ու կքննարկեինք իրա դիտարկումները: Դե՛, չէ: Ես, իհարկե, իմ ասածի եմ, ու ով ինչ ասի, մեկ ա ես գրելու եմ նենց, ոնց ուզում եմ, բայց դե մարդ ա, թող ասի, մեջը չպահի: Համ էլ, ո՞վ գիտի, մի օր կարող ա սկսեմ մտածել: Մի ընկեր ունեի, որ մի վախտ ինչ-որ հեքիաթներ էր կարդում կառուցվածքի մասին, բանի տեղ չէի դնում, բայց մի օր չգիտեմ խի, սկսեցի էդ մասին մտածել: Հիմի էլ էն նկարիչ ընկերս ա սկսել փիլիսոփայել: Տեքստերս կարդացել, դուրն էկել ա, հիմի էլ ասում ա արի դիտարկումներս ասեմ: Ա՛յ, մարդ, սաղ դիտարկում անող եմ դառել: Մեկը չկա՝ Տաիշին տանի տուն, լողացնի: Կեղտակորույս եմ: Հիմնահատակ:

Քյասար, ոնց օգեցի-բռնեցի՝ սաղ մեղավորը բալագույն կրծկալով կինն էր, քանի որ ինքն էնքան էր դոմինանտել տեքստիս մեջ, որ լրիվ մոռացել էի գրախանութի խեղճ տնօրենին, ու ինքն էլ ցրտից, տո լի՝ իմ դարդու մեռել էր:

-Ոչինչ, դարդ մի արա, ես իմպրովիզի մարդ եմ, կարող է տեքստիս մյուս կտորների մեջ քեզ սաղացնեմ,- տնօրենի գտնված ականջի կտորի մեջ կեղտակորույս ձայնով կռնչում ու պատրաստվում են գնալ, ու էդ պահին մտքիս ա գալիս, էս խեղճ տնօրենին սաղացնելու վախտ բա՞ որ հանկարծ սաղ կտորները չգտնե՞մ:

-Ու՞մ ա պետք կիսատ -պռատ տնօրենը,- միտք եմ անում էն մասին, թե ոնց եմ ապագա տեքստիս մեջ լուծելու գրախանութի տնօրենին սաղացնելու հարցն ու նորից մտածում եմ, որ թույն կլինեք, եթե աչքը դնեի ասենք ականջի տեղը կամ, ասենք փորի: Չէ՛: Սրունքի վրա: Ջոկո՞ւն եք, ուրեմն մարդ ա գալիս դեմդ ու հո՛պ, ոտի

կամ թևի վրա աչք: Դե բանը ճակատին չէի ուզեմ կայցնել, էդ հաստատ:

Քյասար, չուզեցա ֆանտազիայիս զոռ տայի, քանի որ նախ էս պահին գրախանութի տնօրենի հարցը օրակարգից հանել էր, հետո դեռ չգիտեի իրան սաղացնելու եմ, թե ոչ, իսկ որ ամենակարևորն ա՝ կեղտակորույս էի ու մարդ էի ման գալիս, որ ինձ տաներ տուն ու լողացներ վերը նկարագրված մեխանիզմի բոլոր կետերի համաձայն, եթե երևակայությանը զոռ տար ու ասենք բաղնիքում մոմեր շարեր, դեմ չէի լինի, կամ ասենք ջրի մեջ անուշահոտ յուղ լցներ ու տենց...

Քյասար, գրախանութի տնօրենից անցնելու ժամանակն էր, բայց նավսյակի մտածեցի, որ ճիշտ կլինի հետագայի մասին մտածեմ ու մարդու կտորները հավաքեմ՝ մեկին պահ տամ: Ժամանակին, եթե իրան գրախանութի ներսում թողած լինեի, հիմա խեղճը ցրտից սառած չէր լինի: Դե էն ժամանակ չգիտեի, որ իրան անդրադառանալու եմ, բայց տեսա՞ր ի՞նչ էղավ: Հո՛ւյ: Ու անդրադարձա: Ուրեմն լավ կլինի հետագայի մասին մտածել ու խեղճի կտորները մեկին պահ տալ: Մտա գրախանութ ու ավել ուզեցի, որ մանր փշուրներն էլ բիլա հավաքեմ: Գրախանութը մնացել էր տեղում նենց վիճակով, ոնց որ թողել էի: Իհարկե, էն ժամանակ գրախանութի ներսը չէի նկարագրել, քանի որ տնօրենին ռաստվել էի շեմի վրա ու տեղում բաց չէի թողել չգրածս վեպը քիթը խոթելու հնարավորությունից, բայց դե ենթադրելի էր, որ դա մի գրախանութ ա, որի մեջ լիքը պուկեքով դարակներ կան ու այդ պահին ինչ-որ մարդիկ գրքեր են նայում, որոշները ամուսն են, իսկ որոշներն էլ ուզում են դուրս գան: Ուրեմն իմ գնալուց հետո գրախանութը մնացել էր մի վիճակում, որը պատկերացնելը բոլորովին դժվար չի, եթե գրեմ, որ կանգնեցված կադր էր: Մարդկանցից որոշների մի ոտը մնացել էր օդում, մեկը փողն էր տալիս վաճառողուհուն, իսկ սա էլ ձեռն էր մեկնել վերցնելու...

Ամենածածաղալուն մի աղջիկ էր, որը պուկեքի հետևում թաքնված ուզել էր կարգի բերել դեմքն ու սումկից հանել էր շրթներկն ու հայելին: Շրթներկը երկու մատով շրթունքին դեռ չհասած՝ շուրթերը կլորացրած ու աչքերը հայելու մեջ կկոցած այդ աղջկա դիրքն ինձ զվարճացրեց, ու ես ծիծաղեցի: Կողքից կանգնած էր մի տհաճ արտաքինով տղամարդ, որի ձեռքը մնացել էր շալվարի հետևում լռված: Նա հաստ ու կլոր եզրույթով մատները մտցրել էր շալվարի մեջ ու քորում էր, ով գիտի հետանցքը, համենյան դեպս, ուրիշ պատճառ չկար նրա ձեռքի այդ դիրքում հայտնվելու մեջ, որի ժամանակ նրա ձեռքի միջնամատը մյուսներից անջատված ուղղված էր դեպի ներս, իսկ մյուսները ավելի կծկված էին:

Դա տեսց մի վայրկյան, քանի որ հենց տեքստիս մեջ հասա էդ կտորին, շարժումը միանգամից շարունակվեց, ու վաճառողուհին վերցրեց արդեն գրքի փողը, աղջիկը շարունակեց ներկել շուրթերը, իսկ տղամարդը իրոքից որ քորում էր հետանցքը:

Սա, ով գիտի, մի տարի երևի չի լողացել: Մտածեցի ու շտապեցի հիշել, թե երբ եմ վերջին անգամ քորել հետանցքս: Չհիշեցի, անկեղծ ասած: Որտե, ես ամեն գուգարան էթալուց հետո փութաջանորեն լվում եմ էղած-չեղածս: Չնայած քորելը հո՞ կեղտից չի, չնայած դա էլ հնարավոր տարբերակ ա, բայց ինչ որ ա, էդ մարդն ինձ ընդհանրապես հետաքրքիր էլ չէր, ու դաժե չմտածեցի անգամ, թե հետույքը հասարակական վայրում քորող մարդու ինչի՞ն էր գրախանութը: Գի՞րք էր ուզում ամեն: Կարող ա մտել էր հետույքը քորել. վերջին միտքն էր մարդու հետ կապված էր

էր, որից հետո առաջացաւ ադմինիստրացիա ու ավել խնդրեցի:

-Ինչի՞ համար,- զարմացած հարցրեց կոկիկ արտաքինով ու սիրունիկ մի աղջիկ, ու ես տուտժե մտածեցի, որ սա երևի հենց մի կես ժամ առաջ լողացել ա:

-Դե, վերջին անգամ ձեր գրախանութի մոտ մի ամիս առաջ եմ եղել ու էդքան վախտ ձեր տնօրենը դռան առաջ կայնած մնացել ու ցրտից մեռել ա,- աղջկա լայնացած աչքերի ներքո շարունակուեմ եմ,- հիմի ուզում եմ բոլոր փշուրները հավաքեմ, որ մյուս գալուց, ԵԹԵ, կրկնում եմ, ԵԹԵ ուզեման սաղացնել, ձեր տնօրենը կիսատ-պռատ չստացվի:

Տեսնելով, որ էս աղջիկը ռեակցիա չի տալիս, էնքան որ ապուշացած ա, առաջ եմ քշում դեպի մի դուռ, որտեղ իմ պատկերացմամբ, պետք է որ լինեին կենցաղային պարագաներ: Չեմ սխալվում: Վերցնում եմ ավելն ու սավոկը ու աղջկա նույն հայացքի տակ՝ վռագ դուրս գալիս սենյակից քանի դեռ սա ուշքի չի եկել ու ինչ-որ բան ասել, քանի որ մի բան ասելու պարագայում պիտի կանգնեի ու սկսեի գրել, թե ինչ ասաց այդ աղջիկն ու տենց, ու հլը դեռ հարց կարող ա առաջանար նկարագրելու էդ աղջկա արտաքինը, քանի որ կերպար մտցնելուց, էն էլ ԱՂԶԿԱ կերպար, պետք է որ գոնե մի քանի մանրագույն շտրիխներ տայի, որը անելու ոչ մի ցանկություն չունեի նախ այն պատճառով, որտեղ սույն աղջկան հետագայում չէի անդրադառնալու, հետո էս տեքստում ինքն ընդամենը ոչինչ չփոխող դետալ էր, որտեղ կարայի իրան էլ, ընդհանրապես չմտցնեի տեքստ ու պոյամո էթայի էդ սենյակ, իսկ ամենակարևորը՝ վռագ էի: Որտեղ մարդ էի ման գալիս, որ ինձ տաներ իրանց տուն ու լողացներ վերը նկարագրված մեխանիզմի կետերի մանրամասն հաջորդականությամբ, եթե երևակայությունը ներեր, թույլ կտայի, որ ոտերս ու թևերի տակը ինքը սափրեր:

Քյասար, էս ամենը գրեցի, որտեղ միտք էի անում, թե որտեղ կամ ում պիտի պահ տամ էս տնօրենի կտորները ու պահի տակ հիշեցի, ախր, որ մի ընկեր ունեի, որ սաղ օրը ականջիս տեքստի կառուցվածքի ու նմանատիպ օրինաչափություններին հետևելու մասին ախմախություններ էր պատմում: Ու նա ինձ էնքան էր ներվայանացրել իրա անպտուղ բարբաջամքով, որ որոշել էի հորինել տեքստի դասական կառուցվածքի հետ որևէ կապ չունեցող մի տեքստ, որը չէր հիշեցնի ոչինչ գոյություն ունեցող կառուցվածքի, տրամաբանության ու դրանց միավորող ընդհանրություններին, ու, որի գոյության վրա ինքը չարախնդացել կամ մտքում քմծիծաղ էր տվել էն իմաստով թե դ՛ու, այսինքն՝ ես, ի՞նչ ես հասկանում կառուցվածքից, որ մի հատ էլ ամպագոռոռ հայտարարություններ ես անում, ու ասել էի, որ հորինվածքովս քթին եմ խփելու: Այդ մասին, կարծեմ գրել էի տեքստիս սկզբնական մասերից մեկում: Ու հենց նոր հիշելով, որ ինքը շատ հարմար տարբերակ ա գրախանութի տնօրենի փշրված կտորները պահելու համար՝ իրա խաթեր կոմպրոմիսի գնացի ու մի փոքր նկարագրություններ մտցրեցի գրախանութի ներսի ու բովանդակության մասով ընդհուպ մինչև այն, որ մի սիրունիկ աղջկա էլ ներմուծեցի, որին ատչյոտ էի տալիս, թե ինչիս ա պետք ավելն ու սավոկը: Դա արված էր հատուկ այդ ընկերոջս սիրաշահելու նպատակով:

Քյասար տնօրենին ամբողջությամբ հավաքեցի՝ ուշադիր զննելով շուրջ բոլորս, որ ոչ մի փշուր չմնա: Ընկերս ժպտադեմ ու հաղթական կանգնած էր դեմս:

-Ո՞ր ա քո առանձնահատուկ տեքստը,- վերամբարձ վրա տվեց նա, ու ասածի տոնի վրա զգացի, որ ուղեղիս ճիճիկները խառնվում են իրար:

-Չբռնե՞մ սրան ստեղ մի հատ դանկեմ,- մտածում եմ,- չէ՛, այ մարդ, սա ինձ դեռ պետք է, բա ու՞մ պիտի պահ տամ տնօրենի փշուրները:

-Բա՞ որ տնօրենին չանդրադառնամ,- նորից միտք ա գալիս,- հիմի բաց թողած կլինեմ դրա ժեխոտ մռութը ցխելու հնարավորությունը:

-Ոչինչ, թե տնօրենին չանդրադառնամ, իրան կանդրադառնամ, մեզ ի՞նչ ա եղել,- պատասխանեցի ինքզինքս ու մեղավոր ժպտացի ընկերոջս:

-Լսի՛, - կեղծավոր ժպտում եմ,- դու մեծ մարդ ես, շատ բան գիտես, որ մի բան ասում էիր, երևի մի բան գիտեիր: Արի դու պահի ես գրախանութի տնօրենի կտորները, մինչև ես լողանալուս հարցերը լուծեմ:

-Դա հնարավոր բան չէ, որ դու կարողանաս անել: Որպեսզի դու կարողանաս վեպ գրել, քեզ պետք է մի քանի գործողություններ, օրինակ քեզ պետք է մի մարդ, որը ազատ լինի իր գործողություններում, երկրորդ գործողության իմաստը կայանում է նրանում, որ քո կերպարը կատարում է մի բան, որը փոփոխություն է մտցնում, ու եղ գործողության իմաստը պետք է լինի ինտերսուբյեկտիվ...

... Ինտերսուբյեկտիվ...

... Օթելո և Յագո, գործողությունը կատարում է Յագոն... նա կարծես տեքստի նման կարդում է Օթելոյին, Դեզդեմոնային և մյուս հերոսներին... Տեքստը... Ինքը ասում ա.... Շեքսպիրի ժամանակ, Թոմաս Մուրի և այլն.. արդեն հայտնաբերում ես էնպատիա...

-Ընկեր ջան, մենք հլը ինտերսուբյեկտիվից չպրծանք...

... էնպատիա, այսինքն ուրիշին հասկանալ, դա շատ հետաքրքիր ձևով էր կատարվում: Մարդուն ասում էին. պաշտպանիր այս տեսակետը, իսկ հիմա մի ուրիշ տեսակետ և եդպես մարդիկ կարողանում էին հասկանալ իրար, օրինակ լեոնականը կարող է հասկանալ սերժականին...

-Ընկեր ջան, պրիչյո՞մ տուտ Սերժն ու Լևոնը, կամ Ռոբին բա խի՞ մոռացար...

... և հասկանալով ինքը կարողանում էր ոչնչացնել... չէ՞ որ դա սուր, աստվածաբանական վեճերի՝ 16-րդ դարաշրջանի խնդիր էր: Մի ամբողջ հզոր ու բարդ տեխնիկա էր զարգանում, դա կոչվում է օբյեկտ: Դա, ուրեմն, ինտերսուբյեկտիվ գործողություն է, որի վրա, օրինակ... այդ տեխնոլոգիան, որը մշակել է Շեքսպիրը այսօր դրված է սերիալների հիմքում, իսկ սերիալների հիմքում դրված է էնպատիան. լինել ուրիշի տեղում թե ոչ... Այս հայտնագործությունը Հայաստանում դեռևս չի

կատարվել: **Մարդը, եթե առաջադիմական է, երբեք չի մտածում, թե ոնց է մտածում, օրինակ, պահպանողականը....**

-Ընկեր ջան, վերցրու հա՞ ես գրախանութի տնօրենի փշուրները, ես էթամ...

... Հրանտ Մաթևոսյանի արձակն, օրինակ, տարբերվում էր նրանով, որ ինքը կարողանում էր լինել տարբեր՝ ընդ որում իրեն անհամապատասխան հերոսների հետ, ինքը շատ հրաշալի զգում է... ասենք, այս առումով, իհարկե, ես հույս ունեմ որ սերիալների շնորհիվ մարդիկ կփորձեն հասկանալ ուրիշներին...

-Պրիչյո՞մ տուտ սերիալները...

...Սերիալները ֆանտաստիկ բաներ են, ուղղակի մեր սերիալներն են գերֆանտաստիկ վատը: Սերիալը պոստմոդեռնիզմի լավագույն հայտնագործություններից մեկն է, երբ ֆորմա է դառնում ոչ թե տարբերությունը, այլ վարիացիան: Այո՞, սերիալը ստեղծելը բարդ, շատ բարդ, չափազանց բարդ տեխնոլոգիա է: Ինչո՞ւ է, օրինակ, Լատինաամերիկյան երկրներում սերիալն այդպես մոդա: Այնտեղ հոգեվերլուծությունը չափազանց սարսափելի մոդա է: Հայաստանում քանի՞ հոգեվերլուծող կա: Մեր մոտ ատամնաբուժությունն է մոդա, այնտեղ հոգեվերլուծությունը:

.. Սերիալի կարևորությունը Հայաստանում... Շարքեն մի լավ հողված ունի ընթերցանության մասին... կամայուտերային կամ էլեկտրոնային ընթերցանության դարում, մենք, իրապես անցնում ենք նոր ձևի ընթերցանության, դա ֆրագմենտալ ընթերցանություն է... Տեքստերը ծնվում են ոչ նորմատիվային, այլ իրենց խզման կամ ավելի շուտ արանքում... եթե չկա ընդմիջման տեղ....երբ ընթերցանության հին եղանակը վերացել է, բայց նորը դեռ չի եկել, մարդիկ դադարում են կարդալ... պատմելու ձևը հարմարվել է կյանքի ընթացքին... դա դառնում է ֆորմա, որը մտնում է տեքստ.. գրականություն հին ժամանակներում չի եղել.... գրականությունը հնարվել է 18-րդ դարի սկզբին՝ Ռիչարդսոնի «Պամելա» վեպով ...Ընթերցանության այն ձևը, երբ մարդը՝ վերցնելով գիրքը, բացում, պառկում է բազմոցին և սկսում է կարդալ, հայտնաբերվել է 18-րդ դարի վերջին, մինչ այդ մեկը կարդում էր շատերի համար... մտքի մեջ քո համար կարդալը....

-Քյասար ես թքեցի փայտիկին,- մտածում ու սկսում են մտմտալ, թե հալալուց էս մարդու վերջը պետք ա հենց ստեղ տալ, քանի դեռ գլուխս վերջնականապես էն բանից չի արել:

-Լսի, ընկեր ջան, ես կեղտակորույս եմ, ու մարդ եմ ման գալիս, որն ինձ տանի լողացնի, հասկանո՞ւմ ես....

... Մեկը գրում է բալլադ, մեկը էսսե, ընդհանուր առմամբ նույնն է... տեքստ և տեքստից բխող իմաստը տեսնել, տեքստը բոլոր տեղերում նույնն է: Տեքստի իմաստը պարզելը՝ լինի դա էսսե, վեպ, թե եսիմ ինչ՝ նույն կանոնով է...

Վերջապես ես բարբաջանքից մի կտոր տեղ հասավ: Իմ մոտ հենց ասում են կանոն,

տուտժե ֆազերս խփում ա: Կարելի ա, օրինակ, իմ ներկայությամբ ասել, թե էսինչ բանը չի կարելի, ու հենց դա ասեն, ես տուտժե դա կանեն, անկախ էն բանից, որ մի քիչ առաջ հենց դրա դեմ էի:

-Ես դեմ եմ բոլոր կանոններին,- գոռալով հասա ընկերոջս վրա ու զգում եմ, որ հեսա մատներովս աչքերը բնի մեջ խառնելու եմ,- սիկտիր արեք ձեր բոլոր կանոնները, դալոյ կանոնու, լե՛նին, պ՛արհտիա, գա՛րբա՛չո՛վ, փա՛ռք ՍՄԿԿ, պլանը, պրուլետարներ բոլոր երկրների միացեք.... դրա արևմտյան արտահայտչաձևե՛րը իրենց ֆորմաների մեջ, օրինակ, աքք այն մասին, թե ոնց պրոյեկտել դեմոկրատիան դեմոկրատական ավանդույթներ չունեցող երկրում, դրա բուժման բազմաբովանդակ մեթոդները..... ինչպես բանան աճեցնել մի երկրում, որտեղ դա չի աճում, աբորիգենի ոտը հարմարեցնել կուտուրիենների վերջին պիսկից բխած՝ մինչև ծունկը փաթաթվող ու բոլտ ու գայկի կրունկ ունեցող կոշիկի մեջ.... «Խեռակերների դոնորների ասոցիացիա» հկ կամ որ նույնն է «Խեռածուծների միություն» հկ... մարդամեկը հաստատ կգրեր «Կլրակերների դոնորների միություն» կամ «Կլրակերների ազատ դոնորների նորաստեղծ ասոցիացիա» հկ... որոնք գործում են նույն դաշտում ու իրար դեմ, որոնք կոչված են նույն խնդրի լուծմանը, բայց ոչ մի բան էլ չեն անում էդ ուղղությամբ, որոնք կարող են ձեռի հետ խնդիր հնարել, որպեսզի հետո էդ խնդիրը լուծելու մասին խոսելու բան լինի...

.....պարզվում է դու միջնորդի կարիք ունես, որի հեղինակությունը քո համար ապահովում է... Երբ ասմունքողը ասմունքում է ... Երբ նա բանավոր փոխանցում է... գրավոր... նա վերափնաստավորում է տեքստը.... դա բանավոր կուլտուրայի ծես է... Հայաստանը դեռևս գրողի կուլտուրա չունի...

-ՀԲ-ի ներկայացուցիչն ասել էր. գիտե՞ք, կովին ինչքան շատ են կթում, էնքան ավելի լավ ա կթվում... ու էդ ասելուց աչքերը սադափից էլ պայծառ փայլել էին... կովն էլ իրա երկիրն էր ու իրա երկիրն կով որակող քաղաքացու համար էլ լրիվ մեկ ա , թե որտեղ կամ ինչ պայմաններում կկթի կովը... ու ընդհանրապես, ես նման բառեր չեմ օգտագործում տեքստերիս մեջ, ուղղակի ուզեցա գրեմ, որտե երեսիս շարտում եմ, թե կանոններին դեմ խոսալուց՝ ինքս ուստանովկեքի մեջ եմ, ու ասողն էլ հա կրկնում ա ուստանովկա բառը՝ մոռանալով, որ նույն ուստանովկան ինքը ուսատնովակ ա, որն ինքը վերցրել ա Ալան Ուոթսի «Դձենի ճանապարհից», որը չեմ կարդացել ու ես պահին ցանկություն չունեմ կարդալու, անկախ նրանից, որ էդ Ալան Ուոթսը վայ թե աղջիկ ա, ու վայ թե Կաստանեդայի հետ ինչ-որ մի անգամ հանդիպել ա... ու ընդհանրապես.. ես կեղտակորույս եմ... ու ընդհանրապես ինձ պետք ա մի վանճա տաք ջուր կամ մի բարի հոգի... իսկ ընդհանրապես, ես տեքստը բալագույն կրծկալով կնոջ մասին ա...

....էյնտշեյնը... նա համարյա սուրբ մարդ էր... կաթոլիկներն այդ մասին այդպես էլ գլխի չընկան.... նա հո՞ չէր ծեծում երեխաներին, հո՞ չէր ծեծում.. մաթեմատիկայի ուսուցիչ էր մի դպրոցում.... երեխաներին ծեծում էր սիրելուց... դա մեթոդ էր.... կանոն...

- Մի ասեք իմ մոտ կանոն բառը,- կեղտակորույս կռիչս լցրել եմ սաղ փողոցով մեկ,- ընկեր ջան, հիմի ես քեզ հենց ստեղ կսպանեմ քո կանոններով ու իմ չկանոնների

համաձայն կվերակենդանացնեն, որպեսզի սպասես ստեղ մինչև կորոշեն գամ թե ոչ:

... մարդու բնավորությունը կարելի է տեքստի նման կարդալ, պոստմոդերնիստները հակահեղափոխականացնեն...

-Ընկեր ջան, ես կեղտակորույս եմ, կարո՞ղ ա էսօր բարբաջանքդ պրծնես,

...իմ համար հեղափոխությունը իրերի լեզուն է, երբ իրերի լեզուն սկսում է հաղթել... լավ դա կարևոր չի... կարո՞ղ եմ ես գնալ....,- դուրս ա տալիս ընկերս ու նոր ջոկում եմ, որ սա ինձ բացարձակ չէր լսում ու երևի չէի էլ ջոկե, թե ինչ եմ ուզում իրանից:

-Տո՛, ո՞նց չես կարող գնալ, էն էլ ոնց կարող ես,- վրա եմ տալիս,- բայց իմ ասածը ես մեկ ա պիտի ասեմ:

-Քյասար, ես թքած ունեմ ձեր սաղ կանոնների վրա, մասնավորապես, տեքստի իմաստը պարզելու այն մեթոդի վրա, որի համաձայն տեքստի բոլոր ժանրերից անկախ՝ իմաստը պարզելու եղանակը նույնն է: Ես տենց կանոնից դուրս ծնվել եմ ու տենց անկանոն էլ կմեռնեմ: Ես դաժե թքած ունեմ, որ մի շաբաթ չեմ լողացել ու որ հնարավոր ա՝ վրիցս հոտ ա գալիս: Ինձ իմ հոտը դուր ա գալիս: Բայց ի նե մեչտայ, չեմ թողա, որ վրիցս հոտ քաշես: Իմ կեղտակորույս հոտն անգամ անուշ ա ու դրանից հոտ քաշելու իրավունքը պետք է դեռևս նվաճել: Գիտե՞ս Զրանտի աղջիկն ինչ էր ասել իրանց տակի հարևանին էն բանից հետո, երբ նրանք վերջապես համարձակվել էին բողոքել, թե իրանց տան զուգարանից կոյուղու ջուրը կաթում ա իրանց գլխին:

-Դուք պիտի հպարտ լինեք, որ Զրանտ Մաթևոսյանի տան քաքը կաթում ա ձեր գլխին,- ասել էր Շողերն ու դուռը շրխկացրել հարևանի դեմքին:

-Ինձ դաժե հետաքրքիր էլ չի, թե սա անեկդոտ ա, թե ոչ: Ինձ նույն ձևի մեջ հետաքրքիր չի, թե քեզ ինչ եմ ասել վախտին՝ տեքստի սկզբում: Այն մասին, թե քեզ զարմացնելու համար տեքստի մինչև էդ գոյություն չունեցող մոդել եմ հնարելու ու թե արել եմ դա, թե՛ ոչ: Նույն տրամաբանության մեջ ինձ հետաքրքիր չի քո էս ողջ բարբաջանքը, որը գրել եմ վերևում ու որի վրա ծախսել եմ 3 ժամ: Ես իմպրովիզի մարդ եմ... կարող ա կես ժամից գամ ու ասեմ, որ չէ՛, լափ էլ ինձ հետաքրքիր ա քո ասածները, ու լափ էլ ուզում եմ հասկանամ էդ բարբաջանքից, կարող ա հանգեմ, որ դու ճիշտ ես, կարող ա՛ չէ, կարող ա նոր բան հնարեմ, կարող ա՛ չէ, տեքստը գրում էի մի քիչ գրականի մեջ, հիմի անցել եմ հին ոճիս, կարող ա մյուս տեքստը լրիվ ուրիշ ձևի մեջ գրեմ: Ընկերս ասում ա, որ ի տավո որոշվում ա ընթերցողով. եթե ունես ընթերցող, ուրեմն տեքստ ա: Ես կավելացնեի. իսկ ինչպիսի՞ ընթերցող. ստեղ կարևորը ընթերցողի որակն ա: Իսկ ես ունեմ որակյալ ընթերցող: Տակ շտո, ես գրում եմ ու կգրեմ... մինչև կորոշվի հետագա գրելուս ոճն ու կպարզվի քո սիրելի կանոնների մեջ տեղավորվել- չտեղավորվելու հարցը: Ու ընդհանրապես, ինձ դու շնորհակալ պիտի լինես, որ ուղեղս էսքան բռնաբարելուց հետո, այնուամենայնիվ, ինչ է թե պիտի մի հատ լավություն անեիր՝ պահելու գրախանութի տնօրենի փշրված կտորները, որոշեցի, որ այնուամենայնիվ, քեզ չեմ սպանի ու կթողեմ հանգիստ շնչես: Ու դա արեցի ոչ թե նրա համար, որ քեզնից շահ ունեի, ինչ թե մի քանի տեքստի ընթացքում պիտի պահեիր անմեղ տեղը մեռած տնօրենի մնացուկները, այլ

առաջնորդվելով բարի կամքի դրսևորմամբ առ այն, որ ես չեմ մոռանում իմ կյանքում հայտնված մարդկանցից և ոչ մեկին ու հարգում եմ նրանց գոյության իրավունքը որպես այդ տեսակի մարդ: Ոչինչ էլ պետք չի, որ իմ համար անես: Չեմ սպանի քեզ: Տեքստի տերը ես եմ, գրիչս էլ իմ ձեռք, ո՞վ իրավունք ունի ձեռ տալու գրախանութի տնօրենի բեկորներով լի պարկին: Ես այդ պարկը կդնեմ այստեղ՝ ծառի տակ ու այդպես էլ կթողնեմ: Դու ազատ ես գնալու: Ոչինչ էլ պետք չի, որ անես: Կարծում եմ, որ տեքստի մեջ դու ունեցար քո դերակատարումն ու այլևս քեզ չեմ անդրադառնա:

Դոշս ուռցնելով, որ էսինչ կարևոր ճառ ասեցի՝ տնօրենոտ պարկը դրեցի ծառի տակ ու՝ սովորությանս համաձայն, ուզում եմ անցեմ լեն փողոցն ու ի՞նչ տեճամ. հեռվից հեռու վազքը դանդաղեցնելով մոտենում է ինձ շատ ծանոթ ինֆինիտին:

-Ահա՛,- մտածում եմ,- հայտնվեց նա, ով ինձ կտանի լողացնելու: Յո՞, իզուր տեղը տնից տենց կեղտակորույս վիճակով դուրս չէի եկել:

Ու լոնքելով անցնում եմ փողոցն ու մեջտեղը կայնում ճիշտ այն պահին, երբ ինֆինիտին արգելակում ա կողքս:

-Յը՛մ, ի՛նչ էլ քթածակով տղա ա, ուղիղ կողքս ա կայնում, որ չքայլեմ, տենաս կֆայմի՞ իջնի դուռը բացելու,- մտածում եմ ու եղ մտքի վրա՝ վարորդի դուռը բացվում ա:

Ուրեմն, ինֆինիտիի վարորդի տեղից դուրս ա գալիս, ուրեմն մի հատ անասունի դայդա բութ դենքով ու սև ակնոցներով մի 150 կիլանոց ջանդակ: Ուրեմն տարիքը չկարեցա որոշեմ, բայց երևի կլիներ մոտ 35 տարեկան: Գլուխը լրիվ խուզած չէր, բայց լավ կնդած էր: Սպիտակամաշկ էր՝ լայն երեսներով, մարմնի զույգ կողմերից մի 25 սանտիմետր իրարից հեռու մեկնած ձեռները գողական դիրքով կորացած էին, ձախ ձեռին ինչ-որ բան էր ֆռռցնում, վիզը բաց՝ մոտ մի կիլանոց անճաշակ գործվածքի ոսկյա շղթա, հագը՝ ինձ դուր եկած գույնի ջինս:

-Քո՛ւր ջան, կարո՞ղ ա դու քշերվա էրագ ես, էս սենց ու՞ր,- զույգ ձեռների բթի ու մատնենատի՝ դեպի դենքս ուղղված միաժամանակյա շարժմամբ ունքերիցս ա կախվում սույն հաստագլուխն, ու տեղում կարկանում եմ:

-Գիտե՞ք, ես կեղտակորույս եմ, դա հենց այնպես չի եղել, ուղղակի մեր շենքի մատոռը գողացել են՝ արդեն յոթերորդ օրն ա, ու մեր շենքավորի տանձին չի էդ... Ու, ընդհանրապես, ես շատ մաքրասեր, մաքրակենցաղ աղջիկ եմ, ու ոչ մի նշանակություն չունի, որ տունը ամիսը մեկ եմ մաքրում, կամ որ կողքերս խոզանոց ա, կամ էլ որ մի շաբաթ ա, ներողություն, մի շաբաթ ու մի օր ա, որ լողացած ու գլուխս լվացած չեմ, ես շատ մաքրասեր աղջիկ եմ... իմ վրից հոտ չի գալիս... չնայած կեղտակորույս եմ: Ու, ընդհանրապես, ես մարդ եմ ման գալիս, որ տանի ինձ լողացն... մի բարի հոգի ու մի վաննա տաք ջուր... կեղտակորույս Տաիշա.. ու, ընդհանրապես, ես Ձեզ շատ լավ հիշում եմ... ես թանկարժեք մուշտակ ունեմ հագիս, չնայած որ կեղտակորույս եմ.. մի շաբաթ և մի օր... մի վաննա տաք ջուր... և մի բարի հոգի.. կեղտակորույս...

Ստեղ էս հաստագլուխ եզը աջ ձեռի մատնեմատը տնկում ա գլխի աջ յանից մի կողմ՝ ի նշան էն բանի, որ, վա՛յ թե էս աղջկա ծալերը պակաս ա, ու հենց նույն մոմենտին միտք ա գալիս, որ, սատանեն ասում ա բռնի ու սրան գցի էն գրախանութի տնօրենի օրին: Բայց չեմ հասցնում մի բան ասեմ, որ հաստագլուխը վրա ա տալիս:

-Ախչի՛, կարո՞ղ ա քու յանը տարա՞ծ ա, ի՞նչ ա նշանակում կեղտակորույս, կամ իմ խեռին ա, թե դու քանի օրը մեկ ես տունը մաքրում, կամ վաբշե մաքրում ես, թե՞ ոնց... տո՛, դու՛ էլ , քու՛ վրի հոտն էլ... մի սրա՛ն նայեք ... մի վաննա տաք ջուր, չէ՛ մի չէ... դու աչքիս ջակուզիի կայֆեր ունես...

-Բայց դուք ինձ տեսնելիս արգելակում էիք մեքենան... ես էլ ենթադրում էի...

-Ալա՞, մի դուրս արի, աչքիս ես աղջիկը կտոցրած ա... քուր ջան, լավ չե՞ս, առանց նայելու քշում-անցնում ես, տորմուզ չտամ՝ քցեմ տակս, իմ խեռին չի, թե քու, ո՞նց էիր ասում՝ կեղտակորույս թե... գլխուդ ինչ կըլնի, անկապ տեղը խի՞ մտնեմ մեռելի տակ, ուրիշ բան՝ մեջը քյար ըլնի...

... ուրեմն, իմ թանկարժեք մուշտակն էր պատճառը...

-Ի՞նչ մուշտակ, էս քնձռոտ շուբիդ հե՞տ ես... ախչի, քեզ ասում եմ մի հատ հլը իջի մաշնից:

Ու ստե ինֆինիտիի դեմի մյուս դուռն էլ ա բացվում ու իջնում ա մի հատ միջին մակարդակի ծիտ: Ուրեմն, աղջիկը, հա՛, լավ ծտոտ էր, բան չեմ կարա ասեմ, ու, փաստորեն, հաստագլուխը աղջկերքից գլուխ էր հանում, ոնց հասկացա: Ուրեմն Ալլա կոչվածը մի 25 տարեկան սպիտակամորթ գեղեցկուհի ա՝ երկարոտն՝ մինչև ծունկը կիպ գրկող բաց մարմնագույն բարձրակրունկ սապոգներով, հագին՝ ծունկը հագիվ ծածկող ու գոտկատեղից ներքև լայնացող փեշերով բարձր որակի օխրային տվող երանգախաղով նորկա: Հասցրի աչքս գցեմ մատներին. էդ մասը շատ կարևոր ա իմ համար, ուրեմն Ալլոչկայի մատները երկար ու խնամված էին, եղունգները, ուղղակի, սաղ համը հանեց, եղունգները ներկած էր կարմիր գույնի... ախր, այ Ալլոչկա, հիմի դառնամ քեզ.. ախր, հագիդ օխրայի գույնի նորկային նայեմ, կրեմվի սապոգներիդ, թե՞ մանիկյուրիդ կարմիր գույնին.. ախր, էդ անտերը դժվա՞ր էր բաց մարմնագույն մի բան լղրգեիր մատներիդ...

Ու էս սաղ հեքիաթը սկսել եմ պատմել Ալլային ու ձեռի հետ ջոկում եմ, որ սրանք յար ու յարան ինձ չեն լսում ու իրար աչքերի մեջ են նայում: Ընթացքում գննում էի Ալլոչկի դեմքն ու ֆիքսեցի, որ ինքն էդքան էլ սիրուն աղջիկ չի, ուղղակի դեմքը ճիշտ հարդարել ա: Շատ շպարված չէր. էդ մասը դուրս էկավ: Հաստատ ինքը հենց նոր ջակուզիից ա դուրս էկել, մտածեցի, ո՞վ գիտի էն անասունն էլ մեջքը պռտել ա, տո չէ՛, հա, էդ եզին որտեղից էդքան ֆայմ, դա երևի ներս մտնում ա, թե չէ՝ ոտները դնում ա ժուռնալի ստոլիկին ու Ալլոչկին հրամայում ա կոշիկները հանել:

-Ալլա ջան, ինձ մի հարց ա տանջում, որ դու մտնում ես լողանալու, էս եզը մեջքդ պռտու՞մ ա,- աղջկա դիմագծերի մեջ խորանալով ասում եմ ու ջոկում, որ Ալլոչկին նման հարցերը բացարձակ չեն հուզում, ինքը լրիվ պրիմիտիվ ծիտ ա, որն ուղղակի

լավ տիրապետում և շինվելու բոլոր ձևերին ու իրան պետք և, որ նորկեն ու մնացած ատրիբուտները տեղում լինեն, թե չէ՝ հենց եղունգի լաքի փողը էդ օրը պակասեց՝ տուտժե կթմնի հաստագլուխ եզի վրից ու մի հատ ավելի հաստավզին կճարի, ու անկեղծ ասած էդ հաստագլուխների հետ ինքը շատ ճիշտ էլ վարվում և, ապրես, Ալլա ջան, տակ ձերժած, դրանց որ դու չկթես, իրանք են քեզ կթելու, սաղ ձևերով կշինեն ու հայդե՝ տռաս... քանի կարում ես՝ կթի...

-Տիկին ջան,- ասեց Ալլան ու ստեղ ֆազերս խփեցին: Ինձ, որ ասում են տիկին՝ քիչ և մնում դեմքին բոքսեն: Այ մարդ ես ձեզ ի՞նչ տիկին, կրակն ընկանք, որ հայոց լեզուն էդ հարցում մի քիչ թերացել և... դա նույնսիկ հայոց լեզվի հարցն էլ չի, ընկալման խնդիր և...- տիկին ջան, եթե դուք ձեզ լավ չեք զգում, Արտոյին կասեմ՝ տուն կտանի:

-Ա՞րտ,- ու աչքով և տալիս էն կնդած գլխին:

-Ալլա ջան, դու լավ աղջիկ ես երևում, չնայած լրիվ ծտի վիդ ունես, բայց էդ կարևոր չի, մեր հարևան պառավն էլ և մարդ, ինքը մի 50 տարի առաջ քո նման ջահել և էղել ու ով գիտի՝ ինչ-որ երազանքներ և ունեցել: Ուրեմն, Ալլա ջան, մյուս անգամ էս շորերդ որ հագնես՝ մատներիդ կարմիր մանիկյուր չքսես:

Կնդած գլուխը ձանձրության կկոցող եզային հայացքով ձեռն և թափ տալիս ու ուզում և էթա դեպի իրա ինֆինտին, Ալլոչկեն մի վերջին հայացք և գցում վրես..

-Յա՛, ու չմոռանամ, էդ եզին լավ կկթես, ինքը կթու կով և, քանի կթվում և՛ կթի...ՅԲ-ի ներկայացուցիչն ասել և, կովին ինչքան կթում ես՝ էնքան լավ և կթվում..

Ալլոչկես ինչ-որ բան և ուզում ասի, բայց էն կնդած գլուխը աղջկա ձեռից քաշում ու տանում և ինֆինտին: Էդ եզը, ուրեմն, դաժե աղջկա դուռն էլ չի բացում, եզավրա էթում ու վեր և ընկնում իրա տեղը, իսկ Ալլոչկեն՝ թովալով էթում ու ինքն և բացում իրա դուռը: Վերջին մի հայացք են գցում Ալլոչկի վրա՝ ավստասալով, որ էդ աղջկեն իրա գինը չգիտի ու փողի համար ինչ եզի տակ ասես, որ չի պառկում: Բայց դե գոնե՝ սա լավ կլպում և, աղջիկ կա՝ տրյապկի տեղ օգտագործում ու մի յան են շարտում:

Սրանք նստում են ինֆինտին ու նոր ջոկում են, որ սաղ յաներից սիզնալ են տալիս, որտև կայնած են պրասպեկտի լեն փողոցի ուղիղ մեջտեղն ու ինֆինտին էլ տորմուզ տալով՝ դվիժենին կայնացրել և:

Քյասար իմ կեղտակորույս մարմինն առնում ու էդ փողոցի մեջտեղից ռադս քաշում են: Ստեղ լրիվ ընկճվում են, որտև օր էր փոխվել ու տեքստից տեքստ կեղտակորույս ման են գալիս ու անելիքս չգիտեն:

Յիմի իմ հալն ի՞նչ պիտի լինի, յարա՞բ: Էդ մտքերով ու առանց կողոկուշտս նայելու՝ քայլում ու միամիտ ջոկում են, որ քթիս թույլ միզահոտ և խփում: Գլուխս վեր են բարձրացնում. Նժդեհի գարշահոտ գետնանցումնում են:

Ուրեմն, Նժդեհի գարշահոտ գետնանցումնում՝ հնամաշ գրքերի կույտի գլխին

կուչուռած նույնաբովանդակ մարդու ներկայությամբ՝ սևով սպիտակի վրա կանգնած էր ՅՐԱՇՔԸ, որ կոչվում էր ԲԱԼԱԳՈՒՅՆ ԿՐԾԿԱԼՈՎ ԿԻՆ:

Աչքերիս չհավատացի: Ու ինչպե՞ս էի սակայն մոռացել նրա մասին: Բալագույն կրծկալով կինը՝ սև մատիտի բարակ գծով եզերված թախիծի ԻՍԿԱԿԱՆ հոսքն աչքերում: Ճահճագույնի երանգախաղով մինչև ծունկը ծածկող վերնազգեստով, վարսավիրանոցում մազերը նոր հարդարած ու հոնքերը նոր հանած, թանկարժեք հոտերով բուրող ու դեմքը ճաշակով հարդարած... Յրաշքը ժպտում էր կեղտակորույս դեմքիս:

Նա կանչող հայացքով անբռնազբոս նայում էր, սակայն չհամարձակվեցի մոտենալ, քանի որ մի շաբաթ ու մի օր լողացած չէի: Ու հարցն էն չէր, որ վախենում էի, թե վրիցս գեշ հոտ կգար: Չէ՛, իմ վրից գեշ հոտ չի գալիս: Ողղակի կեղտակորույս վիճակից ինքնազգացողությունս ահավոր վատացել էր:

Բալագույն կրծկալով կինն այս անգամ ինքն արեց առաջին քայլն ու մոտեցավ: Ես հիշում էի, որ մեր վերջին հանդիպման ժամանակ նա խնամված ու նուրբ մատներով բռնել էր դունչս ու մեղմ շրջել իր կողմը:

-Միայն թե էս անգամ շատ չմոտենա, հիմնահատակ կեղտակորույս եմ,- մտածեցի ու սիրտս տեղում նվաղեց, քանի որ բալագույն կրծկալով կինը մոտեցավ ու նույն նուրբ մատների ծայրը հպեց դնչիս:

-Ես քեզ կտանեմ իմ տուն ու լավ կլողացնեմ,- խորամանկ ժպտաց կինն ու այդ մտքից բոլորովին չանհանգստացա: Նրան բացարձակ վստահում էի ու մտքովս անգամ չանցավ, թե ոնց կարելի էր անձանոթ կնոջ հետ գնալ նրա տուն:

-Փակիր աչքերդ Տաիշա,- հանգած գիտակցությունս որսաց բալագույն կրծկալով կնոջ շշուռնը, ու, երբ նորից բացեցի աչքերս՝ տեսարանը լրիվ փոխվել ու Նժդեհի գարշահոտ գետնանցումից հայտնվել էինք շքեղ կահավորված մի բնակարան:

-Բարի գալուստ իմ բնակարան,- հետևիցս ասաց մի ձայն ու շրջվելով՝ տեսա բալագույն կրծկալով կնոջը:

\*\*\*

Ինչ-որ տեղ մարդիկ իրար կոկորդ էին կրծում չեղած կոպեկի համար: Դա նունիսկ զավեշտ չէր: Մարդիկ կուռքերի կարիք ունեն, թեպետ չեն գիտակցում դա: Եվ թող ոչ ոք չփորձի անգամ հասկանալ այն, ինչ գրված է: Միգուցե նրանք շատ լավ էլ գիտակցում են: Ես կուռքեր եմ ստեղծում, որպեսզի հետո փշրեմ դրանք:

Նա վախկոտ է: Այդ մասին վկայում են նրա անարյուն շուրթերը, որոնց ստորին ձախակողմյան հատվածը ժամանակ առ ժամանակ դողում է: Եղի՛ր իմ կուռքը:

Ջոյսը հաստատ հայերենով է գրել Ուլիսը: Որտեղի՞ց նա գիտեր իմ մայրենի լեզուն: Ես մոռացել եմ այդ հայերենը ու գրում եմ փողոցային բառամթերքով: Եղի՛ր իմ հայերենը:

Նրա ստորին շուրթը վախից կափկափում էր իմ ամեհի կեցվածքից: Ես հասարակ մի մահկանացու եմ, որը երբևիցե պառկելու է դագաղի մեջ: Գիտեմ, որ գալու է դրա ժամանակը:

Նա վախենում է ինձից: Ո՛չ: Նա վախենում է ինքն իրենից:

Մարդկային մի արարած կես ժամ առաջ անիմաստ կոպեկի համար ծախսեց մի տարվա չափ կյանք: Ես չեմ արհամարհում նրա գորտի պես դուրս պրծած աչքերը: Նրան ինչ-որ մեկը քարշ է տվել այս կյանք, ինչպես իմ մայրը: Ի՞նչ էր մտածում այդ կինը, երբ պառկած էր տղամարդու տակ:

Ես ունեցել եմ տղամարդու տակ պառկելու փորձը: Թեպետ կգերադասեի տղամարդ ծնվել: Օնլայն տարածքում դիակային լռություն է: Ի՞նչ ես դու հիմա անում: Եղի՛ր իմ սերը:

Կես ժամ առաջ սիկտիր արեցի կուռքերիցս մեկին: Ի՞նչ կգրեր Ջոյսը սիկտիր բառի փոխարեն: Բայց ես նրան սիկտիր արեցի հոգուս մեջ: Սիկտի՛ր եղիր հավիտյանս: Սիկտիրանց սիկտիր: Ինչ լավ է հնչում սիկտիր բառը: Դու երբևէ տեսե՞լ ես մերկ սիկտիրը: Նա կանաչ դողողի պես աչքեր ունի ու հոգով մանր է, ինչպես... Առաջ չէի հապաղի համեմատություն գրելուց: 5 դրամը մեծ փող է:

Ինչ-որ մարդկանց հետաքրքրում են այս մտքերը, թեպետ դրանք գրվում են մի հոգու համար: Ես նրանից կուռք եմ սարքում, որ հետո փշրեն: Այդ մարդը սխալական է, ինչպես ցանկացած մահկանացու: Ես կարդացել եմ նրա սխալներն ու չեմ ցանկանում դրանք տեսնել:

Շորժան այլևս մեռած է: Այս ամառ ես տեսա Սևանյան Արմանին ու հոդս ցնդեց 4 տարվա առասպելը: Նա թեթևակի համբուրեց շուրթերս ու սառը նայեց աչքերիս մեջ: Մենք միասին գնացինք չորրորդ համարի փայտաշեն մի լքված տնակ, թեպետ տնակն իրեն այդպես չէր էլ զգում: Գիշերվա ժամը 11-ն էր: Նա ինձ պոռնիկի տեղ դրեց: Ինձ դա չէր հետաքրքրում: Նա ցանկացավ քնել ինձ հետ ու բարձրացավ վրաս: Աչքերի մեջ որձի ցանկություն անգամ չկար: Նրան չէի սիրում: Նրա եղբայրը դրանից երկու տարի առաջ նույն ասիին ու նույն տեղում մոտեցավ ու ասաց նույն խոսքերը: Մենք հանդիպեցինք երկու տարի հետո: Հանդիպումից երեք օր հետո հանդիպեցի Արմանին: Նրանք իրարից անտեղյակ էին: Ես սիրում էի միայն ինձ:

Իմ Շորժան այլևս մնաց անցյալում: Ես բազմաթիվ թելերով կապված էի նրա հետ: Արմանը դարձել էր արույրե գլխով սիրունատես մի դեմք, որի երակներում փող է հոսում: Փողի հոսքը շարժում է ալամ աշխարհը: Երբեք չեմ ատել փողը:

Նրա անմաքուր շուրթերը համբուրում էին նեխած պնդուկի գորտային շուրթերը: Ես դա երբեք չեմ տեսել, բայց ենթադրում եմ, որ հենց այդպես էլ լինում է: Նրա ձեռքերը

շոյում են գորտի թալուկ ոտքերը: Ինձ դուր են եկել այդ ոտքերը, թեպետ դրանց մաշկը մոտիկից չեն տեսել: Ես զգվում եմ գլուխները նոր հանած ցից-ցից սև մազերի գոյությունից, որոնց ծակող ներկայությունը կանացի ոտքի վրա դիմացինին հասցնում է նոսր մազածածկույթի հետզհետե ահագնացող միտման մասին կոնկրետ տեղեկություններ:

Փշրեք ձեր տան մեջ հայելիները: Դրանք ցույց են տալիս ձեր ներքին մաղձը: Լոգարանիս հայելուց ինձ էր նայում մի զույգ արնակալած աչք, որոնց մեջ հոսում էր շղթայված կիրքը: Ես ուզում էի, որ Սևանյան Արմանը սիրեր աչքերիս խորքը: Նրա եղբայրը մեր հանդիպումից երկու տարի հետո ասաց, որ նկատել է խորխորատի հատակը:

-Դու կույս չես,- ասաց Արմանի եղբայրը՝ Արմանի հետ հանդիպելուց չորս տարի հետո,- ես տեսել եմ քո կուրծքը, երբ կողքի շրջվեցիր:

Լողազգեստս բաց էր: Դրան վճարել էի 33 հազար դրամ սրանից երեք տարի առաջ: Հայելու առաջ տնկված մերկ մարմի վրա քաշած էր 2500 դրամանոց բալագույն կրծկալ: Ո՞ր ուղղությամբ էր շարժվում այդ աղջկա մտքի հոսքը, երբ նա գնեց այդ էժանագին կրծկալը: Չեմ սիրում կրծկալ կրել: Նրա հայացքը թող սավառնի անկրծկալ կորություններիս վրայով ու թող դրանից հատի շունչս: Ես թույլ չեմ տա, որ քո անմաքուր շուրթերը համբուրեն ստիճաններիս ծայրը: Ես ինքս կհամբուրեմ դրանք:

Ես չէի հոգնել աննյութ վիճաբանություններից: Ամբողջ կյանքս անցել էր դրա վրա: Դրա համար էին ինձ ծնել ու որի դեմ էլ պայքարում էի: Իմ պողպատագույն սրճեփն ու բալագույն կրծկալով կինը: Ես կմեռնեմ անկտողուցք կյանքից: Իմ բոլոր երազները կտղուցքի մասին էին: Դրսում մի որձ շուն առանց ամաչելու շինում էր մի էգ շան: Ինձ այսօր ամոթանք տվին, որ մտքերս անսահմանության չափ մանրոտ են: Ես կհավատայի այդ ճշմարտությանը, եթե բառերի հեղինակն ապրեր ամպերի վրա: Այդ մարդն ամբողջ կյանքում կտղուցքի կարոտ էր ու դա գրած էր նրա դողոշի պես սառն ու լարծուն աչքերում: Կարող ես սիրատածել էգ շանն ու բակի ձարխտտի ծով լռության մեջ՝ հետույքից շինել նրա որձին: Նա վշտադեմ հայացքով կնայի քեզ ու ինքնաընծա լռությամբ կհամաձայվի քո պարտադրած իրականությանը: Գոնե մեծ շուն ընտրիր:

Ահագնատեսիլ մի ծայն ուղեղիս միջից քրթմնջում է անհասկանալի բովանդակությամբ հեզ մտքեր: Ինձ տարփածուններ պետք չեն: Չայնը պատկանում է բալագույն կրծկալով կնոջը: Ես նրան չեմ լսում: Հոգիս ճղճիմ է, ինչպես այն կինը, ով անձնական խնդիրներ լուծելու նպատակով ինձ քարշ տվեց այս կյանք: Ամբողջ կյանքում երազել եմ նրան ներելու կորովն ունենալ:

Մի գրամ կտղուցք ցուցանքիս միջին: Իմ մարմնի նրբաշերտիկները բալագույն կրծկալով կնոջ լոգարանում կեղտաթափ լինելուց և նրա մատների մեջ քսուքներով օծվելուց հետո դարձել էին հլու հնազանդ: Տո՛ւր ինձ քո կտղուցքը:

Փողոցում կանգնած մի պոռնիկի աչքերի ծիածանաքարը սրախողխող էր անում մամխագույնի մազերով մի տափամուլի: Նա կլլկի պոռնիկի մարմինն ու դա է նրա

ուզածը: Լլկիր պոռնիկի մարմինը՝ դու, ո՛վ անագորույն պղծասեր, և փոխադարձաբար լլկված կլինի մարմինը քո: Այդ թերատ մարմնի անութներից փչում է գարշահոտը, թեպետ քսակդ լիքն է կեղտոտ փողով: Գոնե շաբաթը մեկ անգամ լողացիր:

Սիրելիս բարձրաբերձ լեռան գագաթին կհամբուրի շուրթերս ու չեմ մտածի նրա շուրթերի անմաքրության մասին: Նա կուռք չէ ու իր հերթին ինձնից սարքում է կուռք:

Իմ ծնկապանակները դողում են նրա ստորին շուրթի վախկոտ սոսափյունից: Ա՛ռ ինձ քո անմաքուր գիրկն ու տուր ինձ քո կտղուցքը: Ես պատրաստ եմ այլևս մեռնելու:

Ինչի՞ց ծնվեց այս միտքը: Ես աղոտ հիշում էի, որ սրանից ամիսներ առաջ սպասում էի նույնպիսի մի զանգի, ինչպիսին հիմա: Չեմ ուզում այլևս տեսնել նրա տիպարը: Նրա դատողությունները ժամանակի մասին սին են ու զուրկ՝ միս ու արյունից: Նա պատրաստ չէ մեռնելու հանուն կտղուցքի, և դա միանգամայն հասկանալի է: Սիրատածի՛ր քո թերատ էգին: Ես տեսա, թե ինչպես էր քո առաջ միմոսություններ անում, երբ նկատեց իմ գոյությունը: Սի բռնադատիր իմ մտքերի ընթացքը: Դրանք ուղղված են դեպի անսահմանությունը:

Քո աչքերի խորքում խնամքով թաքցրած կիրք կա: Դու նստել ես դրա վրա ու մարմնիդ ծանրությունից այն դարձել է լղզված վարսակ, որ փորձում ես մարդկանց մատուցել որպես բարի մարդու հաջողված կերպար: Ես չեմ տեսել քո ուղեղի հրդեհը, դրա փոխարեն ականատեսն եմ սեփական մարմնիս բոցավառմանը: Շատ վաղուց դադարել եմ հավատալ ԵՂՎԾԻ մասին մարդկանց խոսքերին ու գերադասում եմ հավատ ընծայել աչքերիս տեսածին:

Մի գրամ կտղուցք և բալագույն կրծալով կին: Ահա, թե ինչ էի կամենում: Ոչ ոք չգիտի, թե ինչ է կտղուցքը: Մարդկանց մարմինները օդի մեջ վիատ շարժումներ են անում՝ նմանակելով կտղուցքի ապրման կանխազգացողությունը: Այդ մասին գիտեի նրանց պատմելուց և աչքերի մեջ գրված տարտամ մտքերից:

Ջոյսի հայերենը սահմանափակում էր լեզվիս ծայրն ու շնչահեղձ էի լինում բոզի տղա գրելու ցանկությունից:

Ես կմեռնեմ անկտղուցք կյանքից ու չեմ երկնչի այդ մասին գրելուց: Մարդիկ ձեռնասուններ են, որոնց տրված է կտղուցքի մասին ներդրված ընկալում: Հազարամյակներ առաջ այդ նույն մարդկանց մեկ այլ տեսակը գաղափար անգամ չունեին ինչ բան է ամոթը:

Բո՛գ, բո՛գի տղա: Բոզաշունչ բառեր՝ ասված միայն բոզանոցի պղծասեր պոռնիկների շուրթերին հարիր: Քո աչքերի ծայրը շողում է կրքի հորձանքում, սակայն դեմքիդ տկարամիտի ժպիտ է: Ինչո՞ւ ես խառնեցի բոլորին իրար: